ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2025թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Հարութ Թերջյանը, Արթուր Հովհաննիսյանը, Գոռ Հունանյանը, Հրաչիկ Միերյանը, Մյասնիկ Պողոսյան ը, Սուրեն Սահակյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Մանվել Հարությունյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արայիկ Ավետիսյանը

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՇՎԵԿՇՌՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԼԵՔՍՈՒՍ 470 ՄԱԿՆԻՇԻ 527 ԼԼ 70 ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՀԱՄԱՐ ՇԱՐԺԻՉ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Ծաղկահովիտի համայնքապետարանի հաշվեկշռում գտնվող Լեքսուս 470 մակնիշի, 527 ԼԼ 70 հաշվառման համարանիշի ծառայողական ավտոմեքենայի համար շարժիչ ձեռք բերելու անհրաժեշտության մասին համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի հաշվեկշռում գտնվող Լեքսուս 470 մակնիշի, 527 ԼԼ 70 հաշվառման համարանիշի ծառայողական ավտոմեքենայի համար շարժիչ ձեռք բերելու նպատակով համայնքի բյուջեից հատկացնել 995.000 / ինը հարյուր իննսունհինգ հազար / ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 94-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 94-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասերը վարձակալության տրամադրելու մասին համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Թույլատրել Ծաղկահովիտ համայնքի ղեկավարին՝ համայնքային սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ հողատարածքը մրցութային կարգով տրամադրել վարձակալության, սահմանել դրա մեկնարկային գինը և հավելաճի քայլի չափը՝
- Բերքառատ բնակավայրում գտնվող, գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության , 02-027-0115-0024 կադաստրային ծածկագրով 1,63125 հա հողատարածքը, որի մեկնարկային գինը սահմանել 10.000 ՀՀ դրամ, իսկ հավելաճի քայլը՝ 2000 ՀՀ դրամ,
2. Համայնքի ղեկավարին՝ ապահովել մրցույթի հրապարակայնությունը, նախապատրաստել համապատասխան փաստաթղթեր մրցույթը պատշաճ կազմակերպելու և անցկացնելու համար:
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 96-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեի երրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին համայնքի ղեկավարի հաղորդումը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Ընդունել ի գիտություն Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի հաղորդումը 2025 թվականի տարեկան բյուջեի երրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելված 1-ի և 2-ի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 90-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 26.11.2024 ԹՎԱԿԱՆԻ ՎՃՌԻ ԵՎ ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 04.07.2025 ԹՎԱԿԱՆԻ ՈՐՈՇՄԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ի մասի 6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի կողմից 26.11.2024 թվականին ԵԴ2/1052/02/24 քաղաքացիական գործով կայացված վճիռը և 04.07.2025 թվականին ՀՀ վերաքննիչ

քաղաքացիական դատարանի կողմից ԵԴ2/1052/02/24 քաղաքացիական գործով կայացված որոշումը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 26.11.2024 թվականի վճռի և ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.07.2025 թվականի որոշման պահանջների կատարման նպատակով ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի «Կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ին համայնքի բյուջեից հատկացնել ընդհանուր 4.086.585 / չորս միլիոն ութսունվեց հազար հինգ հարյուր ութսունհինգ / ՀՀ դրամ, որից 3.808.500 /երեք միլիոն ութ հարյուր ութ հազար հինգ հարյուր / ՀՀ դրամը 20 հատ 1100 լիտր և 25 հատ 660 լիտր տարողությամբ աղբամանների ձեռք բերման համար, 180.000 / մեկ հարյուր ութսուն հազար / ՀՀ դրամը, որպես փաստաբանի խելամիտ վարձատրության գումար, իսկ 98.085 / իննսունութ հազար ութսունհինգ / ՀՀ դրամը, որպես վճարված պետական տուրքի գումար :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 91-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՐՈՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽՈՐԵՆ ՄԵԼՍԻԿԻ ԱՄԻՐԽԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 02-032-0026-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,8840 ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 7-րդ հոդվածի, « Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 9-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Գեղարոտ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացի Խորեն Մելսիկի Ամիրխանյանին սեփականություն իրավունքով պատկանող, 02-032-0026-0003 կադաստրային ծածկագրով 0,8840 հա արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոխել, այն դարձնել, որպես բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 92-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 02-031-0006-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,7898 ՀԱ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ 0,01061 ՀԱ ՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 3-րդ հոդվածի 1-ին կետի, 7-րդ հոդվածի, « Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3-րդ հոդվածի 9-րդ մասի

պահանջներով և հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. << Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Գեղաձոր բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 02-031-0006-0008 կադաստրային ծածկագրով 0,7898 հողատարածքի 0,01061 հա մասի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոխել, այն դարձնել, որպես բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամաս:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 93-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐԱՅԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով, Ծաղկահովիտ **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանել 2025 թվականի նոյեմբերի 18-ը, ժամը 14:00-ն:

2. Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ գ.Ծաղկահովիտ, Հոկտեմբերյան փողոց 2:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 97-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՉՈՐՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի և 62-րդ հոդվածի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի առաջարկությունը, **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հաստատել Ծաղկահովիտ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի 2025 թվականի հոկտեմբերի 16-ի հերթական նիստի օրակարգը՝
2. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ղեկավարի հաղորդումը 2025 թվականի տարեկան բյուջեի երրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին,
3. Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 26.11.2024 թվականի վճռի և << վերաքննիչ քաղաքացիական դատարանի 04.07.2025 թվականի որոշման պահանջների կատարման նպատակով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքի

«Կոմունալ ծառայություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը գումար հատկացնելու մասին

4. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Գեղարոտ բնակավայրում գտնվող, Խորեն Մելսիկի Ամիրխանյանին պատկանող 02-032-0026-0003 կադաստրային ծածկագրով 0,8840 հա հողատարածքի նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու մասին

5. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի Գեղաձոր բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 02-031-0006-0008 կադաստրային ծածկագրով 0,7898 հա հողատարածքի 0,01061 հա մասի նպատակային և գործառնական նշանակությունները փոխելու մասին

6. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի հաշվեկշռում գտնվող Լեքսուս 470 մակնիշի 527 ԼԼ 70 հաշվառման համարանիշի ծառայողական ավտոմեքենայի համար շարժիչ ձեռք բերելու նպատակով գումար հատկացնելու մասին

7. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքապետարանի կարիքների համար գրասենյակային գույք ձեռք բերելու նպատակով գումար հատկացնելու մասին,

8. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամասը վարձակալության իրավունքով տրամադրելու թույլտվություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

9. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օր սահմանելու մասին:

Կողմ-8 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 89-Ն)*

ԼՍԵՑԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ԳՈՒՅՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ի մասի 6-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով համայնքապետարանի կարիքների համար գրասենյակային գույք ձեռք բերելու անհրաժեշտության մասին համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի առաջարկությունը , **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ծաղկահովիտի համայնքապետարանի կարիքների համար գրասենյակային գույք՝ թվով 60 հատ աթոռներ ձեռք բերելու նպատակով համայնքի բյուջեից հատկացնել 660.000 / վեց հարյուր վաթսուն հազար/ ՀՀ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 95-Ն)*

Ավագանու անդամներ

ԱՐԾՐՈՒՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԱՆԱՀԻՏ ԲՈՅԱՋՅԱՆ

ԲԱՎԱԿԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՆՈՐԱՀԻՆ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ՂԱԶԱՐՅԱՆ

ԵՊՐԱՔՍԻ ՄԱԼԽԱՍՅԱՆ

ՄԻՇԱ ՄԽԻԹԱՐՅԱՆ

ԱՐՄԻՆԵ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ

ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նիստն արձանագրեց՝ Արայիկ Ավետիսյան